«Ցեղասպանութեան Ժամանակ Հայ Կինն Ունեցել Է Երկարաձգուած Հոգեվարք...»

by Asbarez Staff

October 17, 2014

in Հարցազրոյց, Յօդուածներ

0

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱՇԽԱՏՈՂ, ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴՈԿՏՈՐ ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆԻ ՀԵՏ

Զրուցեց՝ ԼՈՒՍԻՆԷ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հայ կանանց միջազգային ընկերակցութեան 7րդ համաժողովին մասնակցում էր Կալիֆորնիայի համալսարանի գիտաշխատող, հայոց լեզուի եւ գրականութեան դոկտոր Ռուբինա Փիրումեանը, ում հետ եւ զրուցել է «Հայերն Այսօր»ը։

Այս համաժողովը ոչ միայն Սփիւռքի եւ հայրենիքի կանանց է մօտեցնում իրար եւ մօտ յարաբերութիւններ ստեղծում՝ ապագայում ծրագրերի, համագործակցութեան համար (ինչը եւ տեղի ունեցաւ նախորդ համաժողովներից յետոյ), այլեւ զանազան խնդիրների, պատմական, գրական, սոցիալական հարցերի վերաբերեալ մտայնութիւններն է

մօտեցնում: Միաժամանակ Սփիւռքը տեղեկանում է հայրենիքի մէջ ապրող հայ կանանց հարցերին, խնդիրներին, իսկ Հայաստանում ապրող կանայք ծանօթանում են, թէ ինչ հնարաւորութիւններ, նախաձեռնութիւններ կան Սփիւռքում:

ԼՈՒՍԻՆԷ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ.- Տիկին Ռուբինա, ո՞րն է հայ կնոջ դերը Սփիւռքում եւ Հայաստանում:
ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.- Յիշում եմ, երբ 20-25 տարի առաջ մենք նման գիտաժողովներ էինք կազմակերպում եւ քննարկում հայ կնոջ դերն անցեալում եւ ներկայում, այլ էր մեր մտապատկերը, ապագայի համար մեր ցանկութիւններն ու իղձերը: Այդ ամէնն այսօր ես որոշ չափով իրականացուած եմ տեսնում: Սփիւռքում այսօր մեծանում է մի սերունդ, որի համար կնոջ եւ տղամարդու իրաւունքների հարց այլեւս գոյութիւն չունի: Ի հարկէ, ես խօսում եմ Ամերիկայի իրականութեան մասին: Միջին Արեւելքի երկրներից ծանօթ եմ միայն Իրանին (որովհետեւ ես Իրանից եմ), որտեղ վերջին 30 տարիներին այն ազատութիւնը չկայ, ինչը կայ Ամերիկայում: Նախքան յեղափոխութիւնը կանայք Իրանում շատ մեծ դեր ունէին ինչպէս հայկական համայնքում, այնպէս էլ իրանական միջավայրում, ինչն այսօր վայրէջք է ապրել: Իսկ պատկերն Ամերիկայում այլ է, կինը կարողացել է գտնել իր տեղն ու դիրքը թէ՛ ընտանիքում, թէ՛ համայնքում:
Ունենք զանազան կազմակերպութիւններ, որոնք ղեկավարում են կանայք: Եւ կինն իր կարողութիւնների պատճառով է այդտեղ հասել, այլ ոչ նրա համար, որ կին է: Ունենք նաեւ կին կոնգրեսականներ:
Հայաստանում կանայք դեռ այդպիսի բարձրութեան չեն հասել, որքան ես նկատում եմ, քանի որ շատ յաճախ եմ լինում Հայաստանում: Եւ դա առաջին հերթին սկսւում է ընտանիքից: Հայ կինը նախ պէտք է արժեւորուի, գնահատուի իր ընտանիքում եւ ապա իր ճանապարհը գտնի համայնքում, հասարակութիւնում:
Այս ամէնին զուգահեռ նաեւ նկատել եմ, որ Հայաստանում դաստիարակւում է նոր սերունդ, որի համար վերելքն իր սեռի հետ կապ չունի: Նա ունի իղձեր, ցանկութիւններ, ապագայի ձգտումներ եւ հասնում է դրան՝ առանց մտածելու, որ կին է ու չի կարող: Բարդոյթ, որը ունէին մեր սերնդի կանայք: Մէկ օրինակ բերեմ. ես Հայ կրթական հիմնարկութեան անդամ եմ, եւ երբ կրթաթոշակներ էինք բաժանում ուսանողներին, նրանց 90 տոկոսը աղջիկներ էին: Ես նաեւ առիթ ունեցայ խօսելու շրջանաւարտների հետ, որոնք այդ տարիքում արդէն շատ ինքնավստահ էին, իսկ շատերն արդէն միջազգային կազմակերպութիւնների անդամ են եւ փորձում են այդ ճանապարհով առաջանալ: Նրանք Հայաստանի ապագան են եւ ինչպիսի յաջողութիւնների էլ հասնեն, դա նաեւ մեր երկրի յաջողութիւնն է: Աղջիկներին ոգեւորելու համար երբեմն ընդունուած, նորաձեւ խօսքեր ենք ասում, թէ դուք էք

Հայաստանի ապագան, Հայաստանը դուք էք ղեկավարելու, բայց իրականութիւն կայ այդ խօսքերի մէջ:

ԼՈՒՍԻՆԷ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ.- Տիկին Ռուբինա, ձեր երեք հատորները նուիրուած են Հայոց Ցեղասպանութեան գեղարուեստական գրականութեան ուսումնասիրութեանը: Ինչո՞ւ ընտրեցիք այդ ոլորտը:
ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.- Հայոց Ցեղասպանութեան գեղարուեստական գրականութեան ուսումնասիրութիւնն ինձ համար եղել է իմ կեանքի ճանապարհը: Վերլուծելով եւ այն անգլերէն ներկայացնելով՝ փորձել եմ ցոյց տալ աշխարհին, թէ ինչ է եղել իրականում: Ես մեծ հաւատ ունեմ գեղարուեստական գրականութեան նկատմամբ: Ես չեմ փորձում Ցեղասպանութիւնը փաստել, այն վաղուց փաստուած է ինձ համար: Ինձ համար Հայոց Ցեղասպանութիւնը կայացած իրողութիւն է եւ մեկնակէտ է իմ գործի համար:
Կարծում եմ, որ գեղարուեստական գրականութիւնը աւելի հաղորդական է եւ հնարաւորութիւն է տալիս աւելի լաւ հասկանալու Հայոց Ցեղասպանութեան իրողութիւնը, ցոյց տալու, թէ ինչ է կատարուել եւ, վերջապէս, որն է մեր պահանջը:

ԼՈՒՍԻՆԷ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ.- Տիկին Ռուբինա, ձեր հատորներում դուք անդրադարձել էք հայ կնոջը: Հետաքրքիր է, ինչո՞ւ էք առանձնացրել հայ կնոջը եւ ի՞նչ բովերի միջով է նա անցել:
ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.- Որպէս կին ցեղասպանագէտ՝ կանացի բնազդս ինձ ենթագիտակցօրէն ուղղորդեց այդ «ճամբով», որովհետեւ Ցեղասպանութեան ժամանակ հայ կնոջ իրավիճակը շատ տարբեր է եղել: Եթէ հայ տղամարդիկ սպաննուել են անմիջապէս, հայ կինն ունեցել է երկարաձգուած հոգեվարք: Նա մի կողմից պայքարել է, պաշտպանել է իր ընտանիքը, միւս կողմից՝ իր պատիւը: Ինչպէս Լորենս Լանգերն է ասում՝ ընտրանք, որը ընտրութիւն չունի: Հայ կինն այդպիսի ընտրութեան առջեւ է կանգնել՝ մեռնե՞լ թէ թուրքի հետ ամուսնանալ, իսլամանալ, երեխային տալ թուրքի՞ն թէ պահել, ու հարց է՝ երեխան կը փրկո՞ւի արդեօք: Ընտրութիւն կեանքի եւ մահուան միջեւ, որը ոչ մի պարագայում փրկութեան չէր տանում: Եւ անդադար այդպիսի ընտրանքների առջեւ կանգնելով՝ հայ կինը որոշումներ է ընդունել միայնակ:

ԼՈՒՍԻՆԷ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ.- Ի՞նչ ընտրանքի առջեւ է կանգնած հայ կինն այսօր:
ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.- Հայ կինը, իմ կարծիքով, կանգնած է մէկ շատ պարզ ընտրանքի առջեւ՝ լինել պարզապէս տանտիկին եւ մտածել, որ իր պարտականութիւնները միայն տան ղեկավարութիւնն է, երեխաների դաստիարակութիւնը: Շատերն ասում են՝ «Օ՜, ես երեխաներ ունեմ դաստիարակելու,

եւ դա արդէն մեծ պարտականութիւն է»: Բայց չէ՞ որ հայ կինը շատ աւելի ներուժ ունի եւ միայն ընտանիքում չպէտք է սահմանափակուի: Նա պէտք է դուրս գայ հասարակութիւն, որովհետեւ շատ մեծ դեր ունի կատարելու համայքնում, երկրի բարելաւման աշխատանքներում բաւականին ներդրում կարող է ունենալ:

ԼՈՒՍԻՆԷ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ.- Տիկին Ռուբինա, դուք ինչպիսի՞ ճանապարհ էք անցել:
ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ.- Իրականում, եթէ ես յաջողել եմ, պարտական եմ իմ ամուսնուն, ով շատ ազատամիտ մարդ է եղել եւ իրապէս օգնել է ինձ: Հանդուրժել է այն պարագան, որ իմ ժամանակը ընտանիքին նուիրելու փոխարէն՝ ես մեծ տարիքում, երբ երկու տղաներս արդէն պատանիներ էին, վերադառնամ համալսարան, ծանր բեռ վերցնեմ իմ ուսերին, հայագիտութիւն սովորեմ, գրքեր գրեմ: Հանդուրժել է, որ զօրուգիշեր կարդամ Ցեղասպանութեան մասին: Հոգեբանի պէս փորձել է ինձ դուրս քաշել այդ մթնոլորտից, որպէսզի կարողանամ առողջ դատել:
Ընտանիքը պէտք է քաջալերի, ոչ միայն ամուսինը, այլեւ՝ երեխաները: Նկատել եմ, որ յատկապէս տղաները խորթ աչքով են նայում իրենց մայրիկին, քոյրիկին, երբ նա փորձում է հասարակական կեանքի մէջ մտնել:
Նախ հաւասարութիւն պէտք է լինի ընտանիքում, որպէսզի երեխաները յետագայում այդ ամէնը կարողանան այլ վայրերում էլ ընդունել:
Կարեւոր է նաեւ աշխատասիրութիւնը, հետեւողականութիւնը: Եթէ յաջողել եմ (չգիտեմ՝ որքան), իմ աշխատանքում եղել եմ աշխատասէր եւ հետեւողական: